# Կարեն Ասրյանի հաջողությունը

Մինսկի ավանդական մրցաշարին մասնակցում էին համարյա 200 շախմատիստներ, որոնցից 17-ը միջազգային գրոսմայստերներ էին, 35-ը՝ միջազգային վարպետներ։

Փայլուն հաջողության հասավ երևանցի միջազգային վարպետ Կարեն Ասրյանը։ Շվեյցարական մրցակարգով, ինը տուրով անցկացված մրցումներում նա վաստակեց 7,5 միավոր։ Այդքան միավոր ունեցավ նաև միջազգային վարպետ Մալախովը, սակայն հաղթողի կոչմանն արժանացավ հայ շախմատիստը, քանի որ նրա մրցաշարային գործակիցներն ավելի բարձր էին։ 18-ամյա տաղանդավոր շախմատիստը արդեն բավականին ժամանակ է, ինչ բարձր արդյունքներ է ցույց տալիս։ Նա 6 անգամ լրացրել է միջազգային գրոսմայստերի նորման, շուտով ՖԻԴԵ-ն նրան կշնորհի այդ պատվավոր կոչումը։ Ի դեպ, Կարենը այս մրցաշարում իր անհատական գործակիցը (էլոն) բարձրացրեց 20 կետով։

Բելառուսի մայրաքաղաքում անցկացված մրցաշարի մասնակիցների թվում էին Հայաստանի մի քանի շախմատիստներ։ Հաջող խաղաց պատանի Լևոն Արոնյանը, որը վաստակեց 6,5 միավոր՝ առաջ անցնելով մի մեծ խումբ ճանաչված շախմատիստներից։